

ՕՐՀԱՆ ՓԱՄՈՒՔԻ «ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 30,000
ՔՈՒՐԴ Է ՍՊԱՆՈՒԵԼ, 1 ՄԻԼԻՈՆ ԷԼ ՀԱՅ»
ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ ՅԱՐՈՒՑԱԾ ՓՈԹՈՐԻԿԸ

ԱՆԻ ԱԻԵՏԻՍԵԱՆ
aniavet84@mail.ru

*«Երբ թեկուզ մի գրող աշխարհում ազատ չէ,
նրա գրչակից եղբայրները չեն կարող
վայելել իրենց ազատութիւնը»:
Օրհան Փամուք՝*

Նոբելեան Գրական Մրցանակի դափնեկիր, համաշխարհային գրականութեան մէջ իր ուրոյն տեղը զբաղեցրած թուրք գրող Օրհան Փամուքը (ծն. 1952 Յունիսի 7ին, Ստամբուլ)² այն թուրք մտաւորականներից է (Էլիֆ Շաֆաք, Թաներ Աքչամ, Սեհմուս Ուլեքի, Ռագրի Ջարաքօլու, Ֆաթիհ Թաս, Բիրոլ Դուրույ, Ռըդուան Քրզզըն եւ այլք)³, որոնք վերջին տասնամեակում ձգտում են ազատել Թուրքիայի Հանրապետութիւնը պատմական եւ ներկայ ժամանակների «տխուր էջերից», երկրի հասարակական կեանքը՝ դեպի ժողովրդավարութիւն տանող ճանապարհի ընթացքը խոչընդոտող բարդոյթներից եւ գտնում են առիթներ՝ խօսելու այդ մասին հրապարակայնօրէն:

Այսպիսի առիթ Փամուքի համար ստեղծուում է, երբ 2005 Փետրուարին հրաւիրուում է Գերմանիա՝ մասնակցելու իր *Ձիւն* վեպի գերմաներէն հրատարակութեան շնորհանդէսին, ուր շուէցարական *Tages Anzeiger*ի Փետրուար 6ի համարին օրուայ իրադարձութեան վերաբերեալ տուած հարցազրոյցում, անդրադառնալով երկրների եւ ժողովուրդների պատմութեան փոխարաբերութիւնների ընթացքում տեղի ունեցած, նոյնիսկ ներկայ ժամանակներում կատարուող իրադարձութիւնների մասին մարդու ազատ արտայայտուելու իրաւունքի հանդուրժողութեանը, ընդգծում է՝ *«Թուրքիայում երեսուն հազար քուրդ եւ մէկ միլիոն հայ է սպանուել, ոչ ոք դա չի յանդգնում ասել, ես ասում եմ, եւ այդ պատճառով ինձ ասում են»*⁴: Միայն այս յայտարարութիւնը բաւարար էր, որ Թուրքիայի Հանրապետութեան լրատուամիջոցներ բազում յանցանքներով մեղադրէին Փամուքին:

*Star*ի քաղաքական մեկնաբան Արդան Ձենթուրքը իր «Օրհան Փամուք... Հոգիս Այրեցիր» յօդուածում Փամուքի քայլը համարում է *«ոչ-բարոյական»*, «Նոբելեան մրցանակ⁵ ստանալու համար արուած քայլ»⁶, *Hürriyet*ի մեկնաբան Ֆաթիհ Ալթայըն իր «Մեւ Գրող» յօդուածով՝ *«ստախօս»*, *«խղճուկ արարած»* է անուանում Փամուքին, որին

«թշնամանքն իսկ ակիսու է» յաւելելով, որ մտաւորականը պէտք է փնտռի ճշմարտութիւնը, պէտք է մտածի, դեռեւս անորոշ պատմական իրադարձութիւնների, ընդգծելով նաեւ թէ՛ մօտ ժամանակաշրջանում յայտնի դէպքերը խեղաթիւրելու իրաւունքը «*իսկական*» մտաւորականին վայել չէ: Այլթայլըն հաւաստում է, որ Հայկական Հարցը քննարկելու համար պէտք է նախապէս հարցի վերաբերեալ փաստաթղթեր ձեռք բերել եւ յետոյ միայն գրել դրա մասին, որ Փամուքը միմիայն ցանկացել է որոշ «լոբիների» օգտակար լինել, Նոբէլեան Սրցանակի յանձնաժողովի ուշադրութիւնը գրաւել, «*երեք-հինգ*» գիրք աւելի վաճառել, «*մէկ-երկու*» մրցանակ աւելի ստանալ⁷:

Նոյն թերթի մէկ այլ լրագրող՝ Ահմէդ Հաքանը, իր «Տեսակէտներ Օրհան Փամուքի Վերաբերեալ» կարծիքում բնական է համարում գրողի արտայայտած յիշեալ մտքերի հանդէպ հրապարակումները, բողոքները, ցոյցերը, առաջ քաշուած հակընդդէմ տեսակէտները..., հայրենիքի դաւաճանի պիտակ «կպցնելը», բայց մերժում է Փամուքին «*հինգ կոպեկանոց գրող*» համարելը՝ զգուշացնելով, որ «*վաղը կամ միւս օրը, ուրիշ մի հեղինակ, որի գրքերը կը կարդանք, կը հիանանք, բացառուած չէ՛ վեր կենայ ու նոյն բաներն ասի, եւ չենք իմանայ, թէ ինչ անենք*»⁸:

*Cumhuriyet*ի թղթակից Աթայոլ Բեհրամօղլուն հարցազրոյցը դիտում է՝ «*հերթական կատակ*», «*անձնական շահ հետապնդող*», «*փոքր հերոսութիւններով ձայնը լսելի դարձնելու, թուրք կամ Թուրքիայի անգրագէտ եւ թշնամական շրջաններին սիրաշահելու..., արտերկրներում վաճառուող գրքերի քանակը աւելացնելու եւ մի պահ առաջ միջազգային գրական մրցանակ ստանալու ցանկութիւն*»⁹:

Նոյն թերթի «Մեր Սահմանները Ճանաչենք Եւ Մեր Անելիքը Իմանանք» յօդուածի հեղինակ Օրալ Չալըշլարըն ընդդիմախօսներին խորհուրդ է տալիս «*չանհանգստանալ*», «*քննարկել եւ իմաստաւորել ասուածը*» եւ ընթանալ «աւանդութեան» ճանապարհով. «*Հայկական հարց, քրդական հարց, ալեւիների հարց, կամ էլ մէկ ուրիշ հարց, այս բոլորն էլ վտանգաւոր հարցեր են: Եթէ սրանք միայն մեծ տերութիւնների ուզածի պէս քննարկենք, ոչ մի հարց չի առաջանայ: Միայն սահմանները չպէտք է խախտել ... բոլորն էլ իրենց սահմանը պէտք է իմանան: Ինչ է, մենք մեր սահմանը չգիտենք*»՝ յիշեցնելով «*Արդեօք չիմացողների գլխների եկածի վկան չեղանք ...*»¹⁰:

Orta Doğu թերթը լայն տեղ է տալիս «Գաղափարական օջախների Ընդհանուր Կենտրոնի» (թրք. *Ülkü Ocakları Genel Merkezi*) սպառնալիքով լի հաղորդագրութեանը. «*Օրհան Փամուքի նմանները այս երկրի մէջ անգամ հող չպիտի գտնեն շրջելու համար, իսկ որոշ ընդդիմադիրներ, նրան պաշտպանելով, գիտակցաբար թուրքի նկատմամբ թշնամութիւն են սերմանում, այս դէպքերից եւ Օրհան Փամուքի դաւաճանութիւնը ապացուցելուց յետոյ այս երկրում նրա շնչած օդն անգամ պէտք է հարամ*

համարել: Թուրքի հայրենիքում թրքութեան վրայ կատարուած այս յարձակումից յետոյ էլ որեւէ միջոցառումի դէմ յանդիման պէտք չէ գտնուել: Օրհան Փամուքին եւ նրա նմաններին հանդուրժելու համբերութիւնը սպառուել է: Այդպիսիների նկատմամբ օրէնքի միջամտութիւնը պարտադիր է, այսուհետեւ բոլորն էլ մեր զայրոյթից իրենց արժանի պատիժը պիտի ստանան, Թուրքիայում ապրելով հանդերձ պիտի սովորեն թուրքին թշնամութիւն չանել»¹¹:

Փամուքի վրայ գրոհող լրագրողներից ետ չեն մնում ակադեմական եւ համալսարանական շրջանակների գիտա-դասախօսական կազմերը՝ նրա խօսքերը որակելով սուտ եւ դիտումնաւոր, Փամուքից պահանջելով փաստել թուերի ճշգրտութիւնը: Թուրք Պատմաբանական Հիմնարկի Հայկական Ուսումնասիրութեան Բաժնի պրոֆեսոր Քեմալ Չիչէքը գրողին որակում է «*հայ ազգայնական*»¹²:

Vatan թերթում հարցազրոյցներով իրար ձայնակցող գիտնականներից՝ Ստամբուլի Համալսարանի դասախօս, դոկտոր-պրոֆեսոր Թոքթամըշ Աթէշը Փամուքի արտայայտութիւնը համարում է «*Անմիտ եւ մեծ թերութիւն վիպասանի համար*»¹³, Թուրքիայի Հանրապետութեան ընկերային պատմութեան մասնագետներից, դոկտոր-պրոֆեսոր Բահաէդդին Եդիբըլըզը մեղադրել է Փամուքին «*անտեղեակութեան եւ անգրագիտութեան*» մեջ՝ արդարացնելով օսմանեան եւ մերօրեայ իշխանութիւնների ոճրագործութիւնները, բռնութիւնները. «*Աշխարհում չկայ մի երկիր, որտեղ առանձին էթնիկ խմբի ապստամբութեանը չմիջամտեն պետական իշխանութիւնները*»¹⁴: Թուրքական Պատմական Ընկերութեան աշխատակից դոկտոր-պրոֆեսոր Հիքմէթ Օզդեմիրը ստախօսութիւն է համարել Փամուքի «*մէկ միլիոն հայի սպանութեան*» պնդումը՝ խոստանալով գիտականօրէն մերկացնել գրողին¹⁵: Վոսփորի Համալսարանի դասախօս դոկտոր-պրոֆեսոր Հալիլ Ինալըքը առաջարկում է անպատասխանատու յայտարարութիւններով ազգին վիրաւորող Փամուքին դատապարտել¹⁶, ձախ մտաւորական գրողներից Նեդիմ Գիւզէլը Փամուքի յայտարարութիւնը մեկնաբանել է որպէս երոպացիներից միաւոր հաւաքելու միջոց՝ «*Մեր գործընկեր» Փամուքը ստել է, որպէսզի ստանայ Նորելեան մրցանակ, բայց մինչեւ հիմա ամբողջովին չի մերկացել*»¹⁷: Արմատական աջակողմեան մամուլն էլ Փամուքի եւ հրէական լոբիի միջեւ կապ է գտել՝ հաւաստիացնելով, որ նա ունի սաբէթական ծագում¹⁸:

Փամուքի համարձակութիւնը յարգողներ էլ են եղել՝ որոշ վերապահումներով: Սաբանջը Համալսարանից Հալիլ Բերքթայը Փամուքի ելոյթը գնահատել է իբրեւ ճշմարտութիւն եւ մտաւորականի ազնուութեան եւ արիութեան վայել երեւոյթ, ու իր հերթին յաւելել է. «*1915-1916 թթ. գուցէ 800 հազար, գուցէ եւ 1 միլիոն հայ վստահաբար*

սպանուել է ... հնարաւոր է երկրի հարաւ-արեւելքում... սպանուած քրդերը 30 հազար լինեն»¹⁹:

Յայտնի քաղաքական մեկնաբան Մեհմէդ Ալի Բիրանըը *Posta*-ի մէջ «Ինչու՞ Օրհան Փամուքը Չպիտի Ասի Իր Մտածածը» խորագրով իր ելոյթում, դիմելով ընդդիմախօսներին, իրաւացիօրէն հարցադրում է. «Այս յարձակումն ի՞նչ է նշանակում: Մարդիկ իրենց ճիշտ կամ սխալ իմացածները իրաւունք չունեն՝ ասելու: Այսպիսի բան ասելու համար Թուրքիան Օրհան Փամուքին միջազգային դատարան է յանձնելու, Միաւորուած Ազգերի Կազմակերպութիւնը Փամուքին որպէս վկայ Թուրքիային փոխհատուցում տալու որոշում է կայացնելու: Ո՛չ: Եթէ Օրհան Փամուքի տեսակէտները չէք կիսում, դուք էլ ասպարէզ դուրս եկէք եւ ընդդիմախօսէք: Ի՞նչ է այս լինչի գրականութիւնը: Այս տարբեր տեսակէտները ինչքան էլ մեզ անհանգստացնեն, ստիպուած ենք համակերպուել: Ես Փամուքի խօսքերին չեմ միանում, բայց նրա արտայայտած խօսքերին պաշտպան եմ կանգնում: Այս հրահրումը ամօթ է եւ ժամանակավրէպ»²⁰:

Փամուքին իր գորակցութիւնն է յայտնում նաեւ Մարդու Իրաւունքների Միութիւնը: 16 Փետրուարի 2005ին մամլոյ ասուլիս կազմակերպելով եւ «Յեղապաշտ, Շովինիստական Յարձակումների Դիմաց Օրհան Փամուքի Կողքին Ենք» վերտառութեամբ հաղորդագրութիւն հրատարակելով, Միութիւնը յայտարարում է. «Գրող Օրհան Փամուքը վերջերս ինքնակորոյս ու սանձարձակ ցեղապաշտ շովինիստական յարձակումների թիրախ է դարձել ... թշնամի յայտարարելով Փամուքին, փորձում են նրա նկատմամբ բացայայտ սպառնալիքները վերաճեցնել պատժական վճիռ կայացնելուն: Իբրեւ Մարդու Իրաւունքների Պաշտպան, մենք, ցեղապաշտութիւնը խստիւ մերժելով, կոչ ենք անում մտքերն ազատօրէն արտայայտելու կողմնակիցներին եւ կազմակերպութիւններին միմեանց սատար կանգնել յանուն ժողովրդավարութեան, ազատ խօսքի»²¹:

Լրագրող Հալուկ Շահինը «Օրհան Փամուքին Յիշեցնենք Բարեկամաբար» (թրք. *Orhan Pamuk'a Dostça Hatırlatma*) յօդուածով պաշտպանութեան տակ առնելով հանդերձ Փամուքին՝ նրա քայլը համարում է հայկական եւ յունական լոբիների ազդեցութիւն. որ «Օրհան Փամուքի շուէյցարական թերթին տուած հարցազրոյցը Թուրքիայի Հանրապետութիւնում բազում հակադրութիւնների ճանապարհ է բացել, որոշ «ոգելորուած» շրջանակների նոր ժամանակների Թուրքիայի ամենայայտնի վիպասանի դիմաց սկսած սպառնալիքներով լի յարձակումը անհանգստացնող է, հակադարձութեան կոպտութիւնը, ատելութիւնը, արհամարհանքը՝ անբացատրելի», եւ Օրհան Փամուքին յորդորում է շփոթահար չլինել իր դիմաց համախմբուած

գաղափարապաշտներից, ազգայնամուլներից, գորշ ֆաշիստներից, քանզի իր խօսքերից «*վիրավորում, ընկճում, երազներից գրկուածների շրջանակներում իր երկերը ինքնամոռաց կարդացողներ, նոյնիսկ զմայլուողներ էլ կան*», որ Համաշխարհային գրականութեան բուրգի գագաթն ի վեր թուրք երիտասարդ գրող Օրհան Փամուքի բարձրացումը, թուրք հասարակական-քաղաքական մտքում հետաքրքրութիւն եւ ուրախութիւն է արթնացրել, վերջապէս, «*լռութեան մասնուածի*» անունից իր երկրի հասարակական իրականութեան վերաբերեալ ցաւալի եղելութիւնների մասին համաշխարհային չափանիշերով խօսող է գտնուել:

Յօդուածագիրը յիշեցնում է նաեւ՝ «*90 տարի առաջ տեղի ունեցած դէպքերի մասին ճշգրիտ թուերով չեն կարող խօսել իհարկէ: Բայց վերջին ժամանակներում 30 հազար քրդերի սպանութեան թուի մասին ինչ կարելի է ասել: ... Տարբեր էթնիկ արմատներով Թուրքիայի Հանրապետութեան քաղաքացիներ չէին: ... Նրանք ծագումով քուրդ էին, նրանց ո՞վ սպանեց*», ապա մեղմելով իր մտքերը՝ լրագրողը բարեկամաբար խորհուրդ է տալիս ընդդիմախօսներին. «*Յայտնի է, որ Օրհան Փամուքի տուած թիւը սիւսլ է, մօտաւոր եւ ոչ-ճշգրիտ: Վիպասանները վէպերում պատմական իրականութիւնը մի փոքր կարող են տարափոխել, նոյնիսկ խեղաթիւրել: Դա նրանց, գրողի գրական իրաւունքն է: Այնինչ պատմիչներն ու լրագրողները այդ իրաւունքը չունեն: Նրանք պարտաւոր են պահպանել թուերի ճշգրտութիւնը: Լաւ է, որ Օրհան Փամուքը պատմաբան կամ լրագրող չէ...*»²²:

Շուէյցարական թերթին տուած հարցազրոյցում Թուրքիայում մէկ միլիոն հայի սպանութեան փաստի ակնարկման վերաբերեալ այս թեր ու դէմ կարծիքներին զուգահեռ թուրքական դատախազութիւնը մեղադրական հայց է ներկայացնում Թուրքիայի Քրեական Օրէնսգրքի՝ 6 ամսից մինչեւ 3 տարի կալանք նախատեսող 301 յօդուածով՝ «թուրք ժողովրդի ինքնութիւնը վիրաւորելու մեղադրանքով»²³, եւ Ստամբուլի Շիշլիի դատարանը, ընդունելով հայցը, դատաւարութիւնը նշանակում է Դեկտեմբերի 16ին²⁴:

Այս որոշմանը անմիջապէս հետեւում է Եւրոմիութեան պատասխանատու Օլի Ռէնի Թուրքիայի Հանրապետութեանը սադրանքի մէջ մեղադրող յայտարարութիւնը իրլանդական *Irish Independent* թերթի Սեպտեմբեր 14ի համարում՝ Փամուքի դէմ բացուած դատաւարութիւնը լուրջ խախտում համարելով մարդու իրաւունքների Եւրոպական Ուխտի դրոյթներին, առաջ քաշելով Թուրքիայի Քրեական Օրէնսգրքի յօդուածների վերանայման պահանջի հնարաւորութիւնը²⁵:

Փամուքի հրապարակային խօսքի նկատմամբ լրագրային հարցադրումները Թուրքիայի դատախազութեան ձեռնարկումների հետեւանքով դատարանի գործողութիւնների ոլորտ տեղափոխուելով,

ստանում են քաղաքական բնոյթ, դառնում միջազգային աւելի լայն քաղաքական շրջանակների հետաքրքրութիւնների առարկայ: Փամուքի համար ոչ-նպաստաւոր ընթացքի դէպքում, նման ժխտական վճիռը եւրոպական հանրութեան եւ Եւրոմիութեան քաղաքական շրջանակներում գնահատուելով «*մարդու իրաւունքների բնագաւառում Թուրքիայի կողմից իրականացուող բարեփոխումների գործընթացում ետընթաց քայլ*», սպառնում է վերաճել Թուրքիայի Հանրապետութեան Եւրոմիութեան անդամակցութեան հարցի վրայ բացասաբար ազդող գործոնի:

Վիճակի նրբութիւնը զգալով՝ Թուրքիայի Հանրապետութեան Արտգործնախարարութիւնը յայտնում է իր մտահոգութիւնը, եւ կարծէս հասարակական տրամադրութիւնը խաղաղեցնելու համար Արտգործնախարար Գիւլը նկատում է. «*Թուրքիայում դատարանները անկախ են: Որեւէ մէկը չպէտք է կասկածի: Մարդիկ Թուրքիայում ազատ են գրելու այն, ինչ մտածում են...: Կ'ուզենայի յայտարարել ի լուր աշխարհի, որ Թուրքիայում գոյութիւն ունի խօսքի ազատութիւն: Մարդիկ հանգիստ յայտնում են իրենց կարծիքը, քանի դէռ նրանք չեն քարոզում բռնութիւն՝ վստահեցնելով, որ իրականացուող բարեփոխումների շնորհիւ դրական մթնոլորտ է ստեղծուել Եւրոմիութեան անդամակցելու համար*»²⁶: Իսկ ամերիկեան հեղինակաւոր թերթերից *Los Angeles Times*ը նկատում է որ «*Թուրքիայի կառավարութեան ներսում պահպանողականները մտածուած փորձում են ձախողել Եւրոմիութեան անդամակցումը*»²⁷, բրիտանական *Financial Times*ը եւս գրում է. «*Թուրքիան ոչ միայն պէտք է մաքրի պատմութեան հետ ունեցած իր հաշիւները*», այլեւ *ընդունի, որ «Եւրոմիութեան սկզբունքներում խօսքի ազատութիւնից աւելի հիմնարար սկզբունք հազիւ թէ լինի*»²⁸:

Ի պաշտպանութիւն Փամուքի ազատախօսութեան պայքարին, Ամերիկեան Հէլսինկեան Յանձնախումբը իր յորդորակոչն է յղում Թուրքիայի Հանրապետութեան օրուայ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանին (ներկայիս նախագահ)՝ առանձնապէս զգուշացնելով. «*Ինչպէս գտնում է Ամերիկեան Հէլսինկեան Յանձնաժողովի նախագահ Սէմ Բրաունը, եթէ դատարանը մեղադրական որոշում կայացնի Օրհան Փամուքի գործով, դա միայն կը պարտադրի աւելի կասկածանքով վերաբերուել ազատութեան եւ ժողովրդավարութեան նուիրուած լինելու թուրքական քաղաքագէտների հաստիացումներին*»²⁹:

Փամուքին իրենց պաշտպանութեան տակ են առնում նաեւ 8 աշխարհահռչակ գրողներ՝ Ժոզէ Մարամագուն, Գաբրիէլ Գարսիա Մարկէսը, Գիւնթեր Գրասը, Ումբերտո Էկօն, Կառլոս Ֆուէնտէսը, Խուան Գոյտիսոլօն, Չոն Ափդայքն ու Մարիօ Վարզասը³⁰:

Փամուքն էլ իր հերթին փորձում է պարզաբանել հարցազրոյցում հնչեցրած մտքերը Հոկտեմբերի 15ին քաղաքական մեկնաբան Թայֆուն Էրթանի վարած CNN-Türk «Söz Sizde» (Խօսքը ձերն է), ուղիղ եթեր հեռարձակուող ծրագրով: Այդ պարզաբանումներն էլ հրապարակում են հանրապետության *Hürriyet* եւ *Milliyet* օրաթերթերը իրենց յաջորդ օրուայ համարներում: Փամուքը նախ պատասխանելով Էրթանի՝ քրդերի սպանութեան վերաբերեալ հարցին, նկատում է որ սպանուած քրդերի թուաքանակը երբեք վիճարկելու անհրաժեշտութիւն չունի, կարելոր չէ 30 թէ 3 հազար քուրդ է սպանուել, դա անժխտելի եղելութիւն է: Եւ որպէս մարդասէր մտաւորական՝ կարծում է, որ այդ թուի մեջ թուրքական բանակի նահատակուած զինուորներ եւս կան, որոնց յիշատակը պէտք է յարգել: Ապա անդրադառնալով Թուրքիայում հայերի սպանութեան հանգամանքների մասին իր արտայայտած մտքերին՝ գրողը դրանք մեկնաբանում է հետեւեալ կերպ. «Ոչ մի անգամ մենք չենք ասել. մենք՝ թուրքերս, այսքան հայ ենք սպանել: Մենք՝ թուրքերս ենք սպանել: «Գենցիդ» կամ «Յեղասպանութիւն» բառերը չեն օգտագործել: Շատ փափուկ է ասուել այս ամէնը: Որոշ ժամանակ անց ընդդիմախօսներս չափազանցնելու մարտավարութեան են անցել, աւելորդախօսութուններով ինձ հայրենիքի դաւաճան են յայտարարել, երեսուն տարուայ գրական ջանքս աղբարկղ են փորձում նետել: ... Նպատակս էր մի քիչ խօսել տաբուների շուրջ: ... Խօսելու արգելքը խոչընդոտ է Թուրքիայի Եւրոմիութեան մուտքին: Ես չեմ ցանկանում, որ իմ դէմ բացուած դատական գործը արգելք լինի Թուրքիայի Եւրոմիութիւն մտնելու ճանապարհին, անկեղծօրէն մտածում եմ, որ իմ դէմ բացուած դատական գործը անօրինական է: Միջավայրում մեզ նեղութիւն պատճառող վիճակ կայ: Լրագրողների մի մասը ուզում է, որ Թուրքիան վատ լոյսի տակ երեւայ, ... Ես խաղանիւթ չեմ ուզում դառնալ»³¹: Փամուքը հաւաստիացնում է. «Ես թուրք եմ: Թուրքիայի Հանրապետութեան առկայ քարտէզի սահմաններով Եւրոմիութիւն մտնելն եմ ցանկանում: Ես քարտէզի փոփոխութիւն չեմ ուզում: Մայրենի լեզուս թուրքերէնն է: ...Բայց երկրում կան մարդիկ, որոնց մայրենի լեզուն թուրքերէնը չէ, մենք՝ թուրքերս ստիպուած ենք վերջնականապէս ընդունել, որ մի երկրում, եթէ կայ այդ երկրի անունը կրող լեզուով խօսող հասարակութիւն, լինի Թուրքիա, լինի Ֆինլանդիա, որեւէ այլ երկիր, մէկ էլ այդ երկրում այլ լեզուով խօսող փոքրամասնութիւն, կռուի փոխարէն խաղաղութեամբ ապրել ցանկացողներ, իշխանութիւն ունեցող մեծամասնութիւնը պէտք է սովորի հանդուրժողականութեամբ վերաբերուել իրենց լեզուով խօսող մարդկանց նկատմամբ, զոնէ մինչ այսօր ցուցաբերածից աւելի նուրբ, 'ես քուրդ եմ' ասողին, չօտարի...»³²:

Փամուքը իր մեկնաբանութիւնը ընթերցողներին լսելի է դարձնում նաեւ Գերմանական Հրատարակչութեան Միութեան որոշումով՝ «2005 թ.

Խաղաղութեան Մրցանակը»ի արժանացման առիթով Ֆրանկֆուրտ այցելելիս: Նա 20 Հոկտեմբերի 2005ին գերմանական *DW-World* թերթին տուած հարցազրոյցում վերահաստատում է Թուրքիայում 90 տարի առաջ եւ մօտ անցեալում տեղի ունեցած եղելութիւնների մասին նախապէս իր ասած մտքերի նկատմամբ իր պատասխանատուութիւնը. «*Ես իմ խօսքերիս պատասխանատուութիւնն եմ կրում: Օսմանեան Կայսրութիւնում հայերի գլխին եկածի մասին խօսելը Թուրքիայում արգելուած է: Ես վիպասան եմ, եւ հարցը մարդու ցան է, դրա մասին պէտք է կարողանալ խօսել: Իւրաքանչիւր ոք ուզում է իմանալ, թէ ինչ է եղել պատմութեան ընթացքում:... Այն, ինչ հայերի հետ տեղի է ունեցել 1915 թ., վիթխարի իրադարձութիւն էր, ինչն, ըստ էութեան թաքցում է թուրք ազգից, դրա վրայ դրուել է տաբու: Բայց մենք պէտք է հնարաւորութիւն ունենանք խօսել անցեալի մասին»³³: Այս իրավիճակի ստեղծող ուժը նա համարում է Թուրքիայի Հանրապետութիւնում այնուամենայնիւ գոյութիւն ունեցող զինուժի ճնշումը՝ ընդգծելով. «*Ես չեմ կարծում, որ իշխող Արդարութիւն Եւ Զարգացում Կուսակցութիւնը սպառնալիք է Թուրքիայի ժողովրդավարութեանը: Սպառնալիքը, դժբախտաբար, աւելի շատ կապուած է զինուորականութեան հետ»³⁴:**

Այնուամենայնիւ Փամուքը Շիշլիի դատարան է կանչուում «Թուրքիայի ազգային արժանապատուութիւնը վիրաւորելու» մեղադրանքով, չներկայանալու դէպքում «բերման ենթարկել» յանձնարարականով:

Փամուքը Դեկտեմբերի 16ին Շիշլիի դատարան է ներկայանում գաղափարակից համախոհներով եւ Եւրոյանձնաժողովի ընդլայնման հարցերով յանձնակատար Օլի Ռէնի եւ Եւրոխորհրդարանի մի քանի պատգամաւորների ընկերակցութեամբ³⁵:

Դատարանի լսումներին նախորդում է Եւրոխորհրդարանի Ընդլայնուած Յանձնաժողովի յայտարարութիւնը՝ զգուշացնելով, որ գրողի նկատմամբ ընթացող դատավարութեան անցանկալի որոշումը կարող է Թուրքիային զրկել Եւրոպական Միութեանը անդամագրուելու հնարաւորութիւնից, իսկ Եւրոխորհրդարանի անդամ Քամիլ Իւրլինգը լրագրողներին բացայայտօրէն յայտարարում է՝ «*Խօսքի ազատութիւնը հիմնական պահանջն է Թուրքիային ներկայացուած, եթէ դեռեւս նա ձգտում է մտնել Եւրոմիութիւն»³⁶:*

Դատարանը, տեղի տալով Եւրոխորհրդի յիշեալ մարմնի ճնշմանը, որոշում է գործի լսումը յետաձգել մինչեւ 7 Փետրուարի 2006ը՝ հարցում կատարելով Արդարադատութեան Նախարարութեանը, թէ արդեօք հնարաւոր է իրականացնել յիշեալ գործով դատավարութիւն, երբ Թուրքիայի Հանրապետութեան նոր Քրեական Օրէնսգրքի 301 յօդուածով «Թուրք ազգին նուաստացնելու համար» Փամուքին մեղադրելու

պատճառ հանդիսացող նրա հարցազրույցը հրապարակուել է մինչև նոր Քրեական Օրենսգրքի ընդունումը, այսինքն՝ 1 Յունիս 2005ից առաջ³⁷:

Թուրքիայի Հանրապետության Արդարադատության Նախարարությունը Յունուարի 22ին Շիշլիի դատարանին է ուղարկում իր պատասխանը՝ նշելով, որ նոր Քրեական Օրենսգրքի համաձայն՝ դատարանը թույլտուություն հայցելու անհրաժեշտությունը չունի, իրաւասութիւնը դատարանինն է: Ուստի, Շիշլիի դատարանը, հիմք ընդունելով Արդարադատության Նախարարության գրությունը, որոշում է կարճել Փամուքի դէմ յարուցուած գործը: Սակայն, իրաւաբան Քերիմչաիզը (դատարանում Փամուքի ընդդիմախօս) պնդում է, որ կը բողոքարկի որոշումը, նկատելով որ *«Օրհան Փամուքը պէտք է պատժուի, Թուրքիային եւ թուրքականութիւնը վիրաւորելու համար. սա մեծագոյն յանցանք է եւ այն չի կարելի անպատիժ թողնել»*³⁸:

Լրատուական մարմինները միասնաբար արձանագրում են, որ դատարանի յիշեալ որոշումով վերանում է Եւրոմիութեան հետ Թուրքիայի Հանրապետության տարակարծութիւնների ծանրագոյն պատճառներից եւս մէկը, եւ եւրոպացիները գրկում են խօսքի ազատութիւնը սահմանափակելու մէջ Թուրքիայի Հանրապետութեանը մեղադրելու հնարաւորութիւնից³⁹:

Այս հարցը, Փամուքի կենսագրականում գրաւելով կարեւոր տեղ, բնականաբար չէր կարող չքննարկուել, չպարզաբանուել իր *Այլ Գոյներ* ինքնակենսագրական բնոյթի վէպում: Գրքում, Փամուքը հանգամանօրէն անդրադառնում է ստեղծուած իրավիճակին, եւ վերամփոփում իր խօսքերը. *«2005 թուականի Փետրուարին շուէյցարական թերթին տուած հարցազրույցի ժամանակ ես ասել եմ, որ «Թուրքիայում սպանուել է 30.000 քուրդ եւ 1 միլիոն հայ», ինչպէս նաեւ ասել եմ, որ իմ երկրում գոյութիւն ունի արգելք այսպիսի թեմաների քննարկման համար: Ես խօսել եմ դէպքերի մասին, որոնք հայերի հետ են կատարուել Օսմանեան Կայսրութիւնում 1915 թուականին: Լուրջ պատմաբանների շրջանակում կասկած չկայ, որ հայերի մեծ մասը, ովքեր ապրել են Օսմանեան Կայսրութիւնում, Առաջին Համաշխարհային Պատերազմի ժամանակ, անվտանգութեան ապահովման պատրուակով ենթարկուել են տեղահանման եւ ընթացքում սպանուել: Թուրքիայի Հանրապետութեան պաշտօնական ներկայացուցիչները պնդում են, որ մահացածների թիւը ուռճացուած է, եւ տեղի ունեցածը չի կարելի համարել ցեղասպանութիւն, քանի որ հայերի ոչնչացումը պարբերաբար տեղի չի ունեցել եւ նաեւ «փաստում» (չակերտաւորումը՝ հեղինակային - Ա.Ա.), որ պատերազմի ժամանակ հայերն էլ են սպանել շատ մուսուլմանների:*

... Եթէ կառավարութիւնը մանրակրկիտ թաքցնում է թուրք ժողովրդից այն ինչ տեղի է ունեցել հայերի հետ Օսմանեան Կայսրութիւնում 1915 թուականին, ուրեմն այս թեմայի վրայ

իսկապէս դրուած է արգելք: Այս ամէնի ապացոյցը իմ ասած բառերն են: Շատ թերթեր իմ դէմ բացեցին մոլեգին պայքար, որոշ յօդուածագիրներ գրեցին, որ բոլորի օգուտի համար ինձ պէտք է լռեցնել, ազգային ծայրայեղական խմբաւորումներ կազմակերպեցին ցոյցեր՝ այրելով գրքերս⁴⁰ ու նկարներս: Քաղաքական հայեազքների պատճառով ես ստիպուած էի որոշ ժամանակով լքել հայրենիքս, քաղաքիս սիրելի փողոցները: Ես ամէնէին ցանկութիւն չունէի մեծացնել այս պատմութիւնը եւ չէի ցանկանում լսել այս գործընթացի մասին: Սկզբում լռութիւն էի պահպանում եւ ամօթի զարմանալի զգացումով փորձում էի թաքցնել կատարուածը: Բայց գործը ստացաւ միջազգային արձագանգ, երբ նահանգապետերից մէկը հրամայեց այրել իմ գրքերը, իսկ Ստամբուլում յարուցուեց իմ դէմ դատական գործ: Ես գիտակցեցի, որ հասարակութեան մէջ բարձրացուած աստելութիւնը ուղղուած էր ոչ միայն իմ դէմ, եւ հասկացայ, որ եկել է ժամանակը խօսելու կատարուածի մասին եւ Թուրքիայում, եւ նրա սահմաններից դուրս: Ես համոզուած էի, որ ազգի պատիւը կարող է կեղտոտել ոչ թէ պատմութեան «մութ հետքերի» բացայայտ քննարկումը, այլ հակառակը՝ նրանց մասին լռութիւնը: Անհնարին է չնկատել, որ այսօրուայ Թուրքիայում աճել է Օսմանեան Կայսրութիւնում հայերի ճակատագիրը քննարկելու արգելքը: Իրականում սա նաեւ ազատ խօսքի արգելք է: Ես հասկացայ, որ այս երկու թեմաները անքակտելիօրէն կապուած են իրար հետ: Գտնում էի միջազգային հետաքրքրութեան եւ ուշադրութեան կենտրոնում, սակայն ինձ համար տհաճ էր գիտակցել, որ ես յայտնուել եմ իմ երկրի եւ այլ աշխարհների միջեւ: Բացի այդ, ակնյայտ է, որ երկիրը, որը ոչ մի կերպ չի կարողանում հրաժարուել գրողներին բանտ նետելու հաճելի սովորոյթից, չի կարող դառնալ Եւրոմիութեան լիիրաւ անդամ: Զգում էի, որ անհրաժեշտ եւ պարտադիր է նկատել Եւրոպայի պահպանողականներին, որոնք չէին ցանկանում տեսնել Թուրքիային Եւրոմիութեան անդամ:

Անբացատրելի է, թէ ինչու է երկիրը, որի գլխաւոր արտաքին քաղաքականութեան խնդիրը համարում է Եւրոմիութիւն մտնելը, փորձում է, ինչպէս կ'արտայայտուէր Ժոզէֆ Կոնրադը՝ «Արեւմուտքի աչքերի առաջ» բանտարկել հեղինակի, ում գրքերը լաւ յայտնի են հենց Եւրոպայում: Ինձ համար դժուար է բացատրել այս անբացատրելին՝ հասարակ տգիտութեամբ, նախանձով կամ անհամբերութեամբ, բայց սա միակ անբացատրելին չէ յիշեալ գործում: Ինչ մտածել, երբ հակառակ եւրոպացիների, թուրքերը իրենց համարում են բարի, ոչ ընդունակ ցեղասպանութեան, մարդկանց կարեկցող, եւ միեւնոյն ժամանակ տարբեր ազգայնական

խմբատրումներ ինձ սպանել են ուզում: Բնչ տրամաբանությամբ է առաջնորդում կառավարությունը, որը բողոքում է, որ նրա թշնամիները սեւացնում են Թուրքիան ամբողջ աշխարհի աչքի առաջ, դրանով իսկ ամրապնդելով «թուրք-գաւթիչի» կերպարը ամբողջ աշխարհում:

... Թուրքիայի՝ Եւրոմիութեանը անդամակցելու կողմնակիցները յաճախ քննադատում են մեզ՝ Եւրոպայի շէմին ճակատագրին սպասող թուրքերիս, տնտեսութեան զարգացման ոչ-բաւարար մակարդակի եւ ժողովրդավարական կանոնակարգերի եւ մարդու իրաւունքի անհետեւողականութեան համար: Վստահ եմ, որ վաղուայ վիպասանները, ովքեր պատրաստում են գունեղ եւ իրական նկարագրել անձնական կեանքը նորի, ... յոյս են փայփայում, որ Արեւմուտքը ապագայում հանդէս կը գայ հենց իրենց իսկ երկրներում խօսքի ազատութեան սահմանափակման քննադատութեամբ⁴¹:

10 Նոյեմբերի 2009ին Նիւ Եորքի Քուինզ Քոլէջում կայացած Փամուքի Անմեղութեան Թանգարան նոր գրքի ներկայացումից յետոյ գրողին հարց է ուղղել Արմնիզի «Քումենտ» հեռուստահաղորդումից յայտնի, Սորբոնի Համալսարանի դոկտորանտ, նիւեորքաբնակ Հայկ Մարտիրոսեանը: Հարցի իմաստը եղել է այն, որ թէեւ Փամուքը Հրանտ Դինքի հետ առաջիններից մէկն է եղել, ով քաջութիւն է ունեցել խօսել հայերի Յեղասպանութեան մասին, վերջերս կարծես թէ կրաւորական դիրք է բռնել այդ հարցում: Հարց տուողը ցանկացել է իմանալ, թէ արդեօք դա նախկինում Փամուքի հանդէպ կատարուած քրեական հետապնդման հետեւանք է:

Փամուքը հարցից անակնկալի է եկել եւ ներադայնացած, առանց «ցեղասպանութիւն» բառն օգտագործելու (բառը երբեք Փամուքը իր յայտարարութեան մէջ չի օգտագործել - Ա.Ա.)՝ պատասխանել է. «*Դա ինձ համար նախեւառաջ խօսքի ազատութեան խնդիր է եղել, եւ յետոյ դա իմ կեանքի միակ թեման չէ: Առաւել կարեւոր խնդիրներ կան: Բացի այդ՝ այս թեմաները նախ պէտք է քննարկի թուրք ժողովուրդը*»⁴²: Եւ հետացել է դահլիճից:

Յունուար 2011ին Աթէնքում տեղի ունեցած գիտաժողովից յետոյ, հարցազրոյց տալով տեղական թերթերից *Քայթիմերին* եւ խօսելով երկու աշխարհներում (Արեւելք եւ Արեւմուտք) Թուրքիայի ունեցած դիրքի մասին, Փամուքը, հաւանաբար, յիշելով անպատասխան մնացած վերյիշեալ հարցադրումը, մէկ անգամ եւս բարձրաձայնում է՝ «*Հայերի եւ քրդերի մասին յայտնի խօսքերիցս չեմ հրաժարուում*»⁴³:

27 Նոյեմբերի 2011ին Քերինչսիզը, փորձելով իրականացնել իր խոստում-յայտարարութիւնը, դիմում է Շիշլիի Գերագոյն վերաքննիչ դատարան նորից Փամուքի գործը բացելու համար: Այս անգամ

դատարանը Փամուքին մեղաւոր է ճանաչում, եւ նա վճարում է տուգանք 6,000 թրք. լիրա⁴⁴:

Հաւանաբար Փամուքը, միանգամայն գիտակցելով Թուրքիայի Հանրապետութեան ոչ-թուրք ազգերի ինքնութեան, նրանց քաղաքացիական եւ պատմական իրաւունքների նկատմամբ իր կառավարութեան վարած քաղաքականութեան ծանրութիւնը եւ երբեք չկիսելով դրա պատասխանատուութիւնը, 2008ից հեռանում է երկրից՝ բնակութիւն հաստատելով Ամերիկայի Միացեալ Նահանգներում, Նիւ Եորքում:

Այնուամենայնիւ, 2015 Փետրուարի 15ին Ստամբուլի Ֆրանսիայի Լրատուական Գործակալութեան (Agence France Press/AFP) հետ հարցազրոյցի ժամանակ, վերստին անդրադառնալով Թուրքիայի Հանրապետութեան քաղաքական կեանքին, քննադատել է իշխանութիւնների ձեւական բնոյթ կրող ժողովրդավարութիւնը, յիշատակել այն գրողների ճակատագրերը, որոնք «բանտարկուել են, արքայադատուել, նոյնիսկ սպանուել», նկատել նաեւ, որ այդ միջավայրում, երբ ինքը տարիներ առաջ համարձակուել է խօսել ժողովուրդների թեմայով, մեծ դժուարութիւններ է ունցել. «Ես դժուարութիւններ եմ ունցել 8-10 տարի առաջ, երբ խօսել եմ ազատօրէն այս թեմայի շուրջ»: Եւ եզրափակել է հարցազրոյցը⁴⁵:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Orkhan Pamuk, *Drugie Tsveta* (Այլ գոյներ), Սանկտ Պետերբուրգ, Ամֆորա, 2008, էջ 87:
- ² Ապրել եւ մեծացել է Նիշանթաշում (Ստամբուլի Գալաթա հատուածամասի հիւսիս-արեւելեան թաղերից): Մերում է հին եւ հարուստ ընտանիքից, Մանիսա եւ Իզմիր քաղաքների յունա-թուրքական միջավայրից: Սովորել է Ստամբուլի Ամերիկեան Ռոբերտ Քոլէջում: Երեք տարի ուսանել է Ստամբուլի Ճարտարագիտական Համալսարանի Ճարտարապետութեան Բաժնում, ապա նախասիրութիւնը փոխել է եւ 1976ին աւարտել Ստամբուլի Համալսարանի Լրագրութեան Ֆակուլտետը: Ի վերջոյ, նախընտրել է վիպասանի ճանապարհը: (Անի Աւետիսեան, «Օրհան Փամուքը Եւ Իր «Մեւ Գիրքը», *Թիրքագիտական Եւ Օսմանագիտական Հետազոտութիւններ*, IV, Արեւելագիտութեան Ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ, Երեւան, 2006, էջ 166-83. նաեւ՝ նոյնի, «Օրհան Փամուքի «Սպիտակ Ամրոց»ը, *Բնօրրան*, թիւ 1-4 (17-20), Երեւան, 2007, էջ 231-36):
- ³ Amnesty International, Statement, 23 January 2006, Turkey: Court Drops Case Against Novelist Orhan Pamuk, www.orkhanpamuk.net, 27. 01. 2009:
- ⁴ «*Թուրքիայում Մէկ Միլիոն Հայ Է Սպանուել*» *Յայտարարում Է Յայտնի Թուրք Վիպասանը*, *Ազգ օրաթերթ*, թիւ 24 (3190), 11 Փետ. 2005 թ., էջ 8. նաեւ՝ Ս.Դ. Գրիգորեան, «Զօրակցինք Օրհան Փամուքին», *Նոր Կեանք* շաբաթաթերթ, ԻԷ.

- տարի, թիւ 43, 6 Հոկտեմբերի 2005, Լոս Անճելըս. նաեւ՝ «Խօսքի Ազատութիւն Թուրքիայում», *Վասն Հայութեան* ամսագիր, թիւ 2, Նոյեմբեր 2005:
- ⁵ 12 Հոկտեմբեր 2006ին Շուեդական Ակադեմիան Օրհան Փամուքին շնորհեց Նոբելեան Գրական Մրցանակ հետեւեալ ձեւակերպմամբ՝ «*Նա իր քաղաքի մեղամաղձոտ հոգին որոնելիս, յայտնաբերեց նոր խորհրդանիշեր բախտոդ եւ իրար յաջորդող մշակոյթների համար*» (*The Nobel Prize in Literature 2006 Orhan Pamuk*, www.nobelprize.org, 12. 10. 2006):
- Այս քայլը թուրքերը որակեցին «*Յեղասպանութեան ճանաչման համար արուած «վարձատրութիւն», «Փամուքի համար յորինուած»* եւն. (*Pamuk's Nobel Prize - "Fee" for Genocide Recognition, Turks say*, www.hhk.am, 24. 10. 2006. նաեւ՝ www.realitycafe.blogspot.com, 27. 03. 2009):
- ⁶ Ardan Zentürk, “Orhan Pamuk ... Canımı Yaktın ...”, (Օրհան Փամուք ... Հոգիս այրեցիր), *Star* gazetesini, 11 Şubat 2005. նաեւ՝ *Agos* gazetesini, “*Basının Pamuk Hezeyanı*” (Մամուլի զանախանքը Փամուքի դէմ), sayı 464, 18 Şubat 2005, էջ 8:
- ⁷ Fatih Altaylı, “Kara Yazar” (Մեւ գրող), *Hürriyet* gazetesini, 11 Şubat 2005. նաեւ՝ *Agos* gazetesini, sayı 464, էջ 8:
- ⁸ Ahmet Hakan, “Orhan Pamuk Üzerine Tezler” (Տեսակետներ Օրհան Փամուքի վերաբերեալ), *Hürriyet* 16 Şubat 2005. նաեւ՝ *Agos*, sayı 464, էջ 8: Այս եւ յաջորդ թուրքական պարբերականներից թարգմանութիւնները յօդուածագրիին են:
- ⁹ Ataoğulları Behramoğlu, “Orhan Pamuk’un Şakaları” (Օրհան Փամուքի կատակները), *Cumhuriyet* gazetesini, 12 Şubat 2005. նաեւ՝ *Agos*, sayı 464, էջ 8:
- ¹⁰ Oral Çalışlar, “Haddimizi Bilelim, Hizaya Girelim!” (Մեր սահմանները ճանաչենք եւ մեր անելիքը իմանանք), *Cumhuriyet*, 16 Şubat 2005. նաեւ՝ *Agos*, sayı 464, էջ 8:
- ¹¹ “Bırakın Herkes Konuşsun” (Թողէք, բոլորը խօսեն), *Agos*, sayı 464, էջ 1. նաեւ՝ «Հիմա Ալ «Փամուք»ը Ելաւ», *Uçou* (Հայերէն ներդիր), թիւ 464, էջ 5:
- ¹² Նոյն:
- ¹³ Յակոբ Չաքրեան, «Օրհան Փամուքը Նշանառութեան Թիրախ Թուրքիայում, Թուրքական Թերթերը Նրան Հոչակում Եւ Ազգի Դաւաճան, Իսկ Թուրք Գիտնականները Չայնակցում Եւ», *Uçq*, թիւ 25 (3191), 12 Փետրուարի 2005, էջ 1. նաեւ Hakob Chakriyan, *Turkish Papers and Scientists Declare Him Traitor of Nation*, www.neomail.sorceforge.net , 15. 02. 2005 :
- ¹⁴ Նոյն:
- ¹⁵ Նոյն:
- ¹⁶ Նոյն:
- ¹⁷ Zentürk, էջ 8:
- ¹⁸ Չաքրեան, էջ 1:
- ¹⁹ “Bırakın Herkes Konuşsun”, էջ 1:
- ²⁰ Mehmed Ali Birand, “Orhan Pamuk neden düşündüğünü söylemesin?” (Ինչու՞ Օրհան Փամուքը չպիտի ասի իր մտածածը), *Posta* gazetesini, 16 Şubat 2005. նաեւ՝ *Agos*, sayı 464, էջ 8:
- ²¹ “Bırakın Herkes,” էջ 1:
- ²² Haluk Şahin, “Orhan Pamuk’a Dostça Hatırlatma” (Օրհան Փամուքին յիշեցնենք բարեկամաբար), www.radikal.com.tr , 01. 07. 2005:

- ²³ 301 յօդուածի համաձայն դատավարութիւններ են սկսուել նաեւ Հրանտ Դինքի, Սեհմուս Ուլէքի, Ռագըփ Չարաթօլուի, Թանէր Աքչամի, Ֆաթիհ Թասի, Բիրոլ Դուրուլի, Ռըդուան Քըզզընի, Էլիֆ Շաֆաքի եւ այլոց, լրագրողներ՝ Սուրադ Բելզէի, Հասան Չենալի, Էրոլ Քաթըրջըրօլլուի, Իսմէթ Բերքանի, Հալուկ Շահինի դէմ (Բաղըլլար Դատարանի Առաջին Ատեան՝ 7 Փետրուար 2006)՝ իրենց բարձրաձայնած մտքերի, յօդուածների պատճառով: Ինչպէս նաեւ Հալիլ Ալթընդէրէի դէմ (Բէյօլլուի Քրեական Դատարանի Առաջին Ատեան՝ 13 Ապրիլ 2006)՝ նկարների ցուցադրութեան պատճառով, որն, իբր «վիրաւորել» է թուրքական բանակին, մտաւորականներ՝ Իբրահիմ Քաթօլլուի եւ Բասքըն Օրանի դէմ (15 Յունուար 2006)՝ փոքրամասնութիւնների եւ մշակութային իրաւունքների համար, գրող Չուլքուֆ Քըսանաքի դէմ (Ստամբուլի Քրեական Դատարանի Առաջին Ատեան՝ 22 Դեկտեմբեր 2005)՝ *Ինչպէս Ժառանգութիւնը Հարիւր Տարի Այրուեց. Կորցրած Գիւղեր* գրքի համար, որը Թուրքիայի Հանրապետութեան դէմ ուղղուած վիրաւորանք էր որակուել (Turkey: Court Drops Case Against Novelist Orhan Pamuk, www.orhanpamuk.net , 27.01.2009. նաեւ՝ *Agos*, “Türkiye Sanık Kürsüsünde” (Թուրքիան մեղադրեալի աթոռին), sayı 507, 16 Aralık 2005, էջ 1):
- ²⁴ *Hürriyet*, “Türkler Ermenileri Kesti Demedim” (Չեմ ասել «թուրքերը հայերին կտտորեցին»), 16. 10. 2005, www.openarmenia.com , 30. 10. 2005:
- ²⁵ Erdal Şafak, “Zamanlama Şaheserleri” (Ժամանակաւոր գլուխգործոցները), *Sabah*, 9 Ekim 2005. նաեւ՝ *Agos*, sayı 498, 14 Ekim 2005, էջ 10:
- ²⁶ «Ազատութեան Ռ/Կ, Գիւլը Արձագանգել Է», *Առաւուր* օրաթերթ, թիւ 172 (2545), 10 Սեպտեմբեր 2005, էջ 2:
- ²⁷ Նոյն:
- ²⁸ Նոյն:
- ²⁹ Informationsnaya Slujba Genocide.ru, Khelsinkaya Komisia Prizivayet Snyat Obviniyaya V Adres Orkhana Pamuka 14 Oktyabr 2005 (Հէլսինքեան Յանձնաժողովը կոչ է անում չեղեալ նկատել Օրհան Փամուքի դէմ յարուցուած դատը) 14 Հոկտեմբեր 2005., www.news.genocide.ru , 22.01.2006:
- ³⁰ “Türkiye Sanık Kürsüsünde,” էջ 1:
- ³¹ *Hürriyet*, “Türkler Ermenileri”:
- ³² *Milliyet*, “Ölenler İçinde Türk Askerleri De Var” (Սպանուածների մեջ թուրք զինուորներ էլ կան), www.openarmenia.com , 30. 10. 2005:
- ³³ Aydınlık, “Orhan Pamuk’a Ödülü Alman Istihbaratı Verdirdi” (Օրհան Փամուքին մրցանակ Գերմանական Հրատարակչությունը յանձնեց), 30 Ekim 2005, www.aydinlikgazete.com :
- ³⁴ «Օրհան Փամուքին Այս Անգամ Մեղադրում Են «Թուրք Զինուորականութեանը Նուաստացնելու Մէջ», *Ազգ.* թիւ 195, 28 Հոկտեմբերի 2005 թ., էջ 1:
- ³⁵ «Նիւ Եորք Թայմս» Թուրքիան Դատաստանի Առաջ», *Ազգ.* թիւ 235 (3401), 23 Դեկտեմբեր 2005, էջ 5. նաեւ “Türkiye Sanık Kürsüsünde”, էջ 1. նաեւ՝ Orkhan Pamuka Posadyat Za Genotsid (Օրհան Փամուքը կը բանտարկեն Ցեղասպանութեան համար), www.reshto.ru , 12. 10. 2005:
- ³⁶ Şafak, էջ 10. նաեւ՝ Informationsnaya Slujba Genocide.ru.:

- ³⁷ Turtsiya Ostanovila Sud Nad Orkhanom Pamukom Posle Oogroz Yevrosoyuza (Թուրքիան կատեցրեց Օրհան Փամուքի դատը՝ Եւրամիութեան սպառնալիքից յետոյ), www.podrobnosti.ua , 18.12.2005:
- ³⁸ 2008 Յունուար ամսին, 33 (35) ազգայնամուլներ, այդ թում նաեւ Քեմալ Քերինչսիզը, ձերբակալուեցին թուրքական իշխանութիւնների կողմից, ընդատակեայ գործող թուրքական ազգայնական կազմակերպութեան անդամ լինելու մեղադրանքով: Այդ կազմակերպութեան անուանումն է Էրգենեկոն, որը սպանել էր քաղաքական անձանց, ներառեալ միքանի քրիստոնէաների, այդ թում՝ խմբագիր եւ հրապարակագիր Հրանտ Դինքին: Միքանի գրութիւններ վկայում էին, որ Փամուքը այս մարդկանց ցուցակում եւս կար: Ծայրայեղականները խոստացել էին 1,5 մլն. ԱՄՆ դոլար՝ Փամուքի սպանութեան դիմաց (*Murder Attempt on Orhan Pamuk Prevented in Turkey*, www.tv.am, 24 January 2008. նաեւ՝ Orhan Pamuk, www.kupec.org.ua , 03. 02. 2009):
- ³⁹ Յակոբ Չաքրեան, «Կարճուեց Օրհան Փամուքի Գործը», *Ազգ.* թիւ 11 (3415), 24 Յունուար 2006, էջ 5. նաեւ՝ «Հանգիստ Թողեցին», *Առաւօտ*, թիւ 11 (2630), 24 Յունուար 2006, էջ 2. նաեւ՝ Radio Svoboda Ob Orkhane Pamuke (Ազատութեան ձայնասփիւռը Օրհան Փամուքի մասին), www.svoboda.org , www.belintellectuals.com , 22.01.2006. նաեւ՝ Turkey: *Court Drops Case Against Novelist Orhan Pamuk*, www.owwww.orhanpamuk.net , 27.01.2009:
- ⁴⁰ Ռ. Պ., «Թուրքերը Փորձել Են Ոչնչացնել Օրհան Փամուքի Գրքերը», *Ազգ.* թիւ 57 (3223), 1 Ապրիլ 2005, էջ 1:
- ⁴¹ Pamuk, *Drugie Tsveta*, էջ 115-17:
- ⁴² «Փամուկին Նեարդայնացրել Է Հայի Հարցումը», *Ազգ.* թիւ 207 (4349), 13 Նոյեմբեր 2009, էջ 1:
- ⁴³ Sözlerimi Geri Almam (Խօսքերս ետ չեմ վերցնի), 17 Ocak 2011, www.gazete5.com/haberler/kultursanat-307.htm :
- ⁴⁴ Orhan Pamuk, from Wikipedia, *the free encyclopedia*, www.en.wikipedia.org/wiki/Orhan_Pamuk :
- ⁴⁵ Turkey's military, which has forced out civilian governments in the past, has been pushed to the sidelines but largely replaced with an Islamist and authoritarian government, Turkish Nobel Laureate Orhan Pamuk said in remarks published on Saturday (<http://www.todayzaman.com/news> , 17.02.2015):

THE REACTION OF ORHAN PAMUK'S "ONE MILLION ARMENIANS AND
THIRTY THOUSAND KURDS KILLED IN TURKEY" STATEMENT
BREAKS HAVOC
(SUMMARY)

ANI AVETISYAN
aniavet84@mail.ru

The author of the paper refers to a statement by the modern Turkish writer and winner of the Nobel Prize in Literature, Orhan Pamuk (Ferit Orhan Pamuk). The statement regarding the Armenian Genocide made during an interview given to the Swiss daily newspaper *Tages-Anzeiger* in February 2005 was: "One million Armenians and thirty thousand Kurds were killed in Turkey. And almost nobody dares to mention it. So I do...".

The paper includes Armenian and foreign media materials and opinions expressed by scientific circles (concerning 2005-2006 and recent years) regarding the above mentioned statement. The paper also presents the course of the court case raised against him in Turkey.

Finally, the author of the paper makes remarks, which allow readers to develop their own opinions.